

Է. Ս. ՄԿՐՏՁՅԱՆ

Հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունը նախադասության կառուցվածքում իմաստային և շարահյուսական առանձնահատկություններ ունեցող կառույց է: Նրա բաղադրիչների շարահյուսական հատկանիշները բացահայտվում են հոլովական, խոսքիմասային արտահայտություններով, համաձայնության և շարադասության գործառություններով: Որպես ընդհանուր կանոն, գրաբարում հատկացուցիչը դրվում է սեռական հոլովով<sup>1</sup>, հատկացյալը՝ բոլոր հոլովներով: Սակայն հոլովների ձգողության օրենքով կամ խոսքիմասային, հատկապես ստացական դերանվան արտահայտությամբ հատկացուցիչը գործածվում է նաև տրական, բացառական և գործիական հոլովներով: Հատկացուցիչը բազմազան է նաև արտահայտած իմաստներով<sup>2</sup>:

Այսպիսով՝ հատկացուցիչի և հատկացյալի համաձայնությունը քննելիս, բնականուրաբար հաշվի են առնվում նրանց շարադասության, հատկացուցիչի իմաստային, հոլովական և խոսքիմասային արտահայտության հարցերը:

Հատկացուցիչի հոլովական արտահայտությունը շառանձնացնելով՝ ներկայացնենք հատկացուցիչի և հատկացյալի համաձայնությունը՝ կապված խոսքիմասային արտահայտության և շարադասական առանձնահատկությունների հետ:

Հատկացուցիչ-հատկացյալի թվային համաձայնությունը

Թվային համաձայնությունը դրսևորվում է խոսքի մասերի միջոցով, իսկ

<sup>1</sup> Գրաբարի քերականներն ընդունում են նաև բացառական և գործիական հոլովներով հատկացուցիչ (տե՛ս Գ. Անտիբեան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, էջ 339—342, Վ. Չալիբեան, Քերականութիւն հայկազնեան լեզուի, Վիեննա, 1885, էջ 252, Սա. Մալխասեան, Գրաբարի համաձայնութիւնը, Թիֆլիս, 1892, էջ 84):

Ս. Ղազարյանը նշում է, որ, բացի սեռականից, հատկացուցիչը կարող է դրվել նաև այլ հոլովներով (տե՛ս Հայոց գրական լեզվի պատմություն, Երևան, 1961, էջ 418), և համապատասխան օրինակներ է վկայում (էջ 493—503):

Մ. Մինասյանն ընդունում է բոլոր հոլովներով հատկացուցիչ, թեև ուղղական և հայցական հոլովով հատկացուցիչը համարում է երբայրենի, ասորերենի ազդեցություն, իսկ բացառականը և գործիականը՝ «յատկացեալի հոլովի ձգողութեան հետևանք» (տե՛ս Գասական հայերէնի նկարագրական քերականութիւն, Ժնև, 1998, էջ 289—300):

Մեր կարծիքով, ուղղական և հայցական հոլովներով հատկացուցիչ համարվածները օրինաչափորեն գործածված շարահյուսական միավորներ չեն, այլ իմաստից բխեցված ու «հարմարեցված» երևույթներ, օտարաբանություններ:

<sup>2</sup> Ս. Ղազարյանը նշում է պատկանելության, հատկացման, սերման կամ ծագման, վերաբերման, տարածական և այլ հարաբերություններ (տե՛ս նշվ. աշխ., էջ 418—425): Վ. Առաքելյանը նկատում է, որ հատկացուցիչը շատ ավելի բարդ ու բազմազան հարաբերություններ է դրսևորում (տե՛ս Հայերենի շարահյուսություն, հ. Ա, Երևան, 1958, էջ 255): Վ. Քոսյանը նշում է 12—13 իմաստներ (տե՛ս Գրաբարի բառակապակցությունները, Երևան, 1980, էջ 14—38):

խոսքի մասերից հատկացուցիչ են լինում գոյականներն ու գոյականաբար անված բառերը, անձներական թվականները, դերանունները, դերբայները:

Հատկացուցիչ թվային համաձայնությունը ցույց տանք ըստ խոսքի մասերի արտահայտության:

1. Գոյականը կամ գոյականաբար անված բառը իբրև հատկացուցիչ, երա համաձայնությունը

Նախադաս և հետադաս հատկացուցիչները հատկացյալներին թվով և՛ համաձայնում են, և՛ կարող են չհամաձայնել: Այսպես. հետադաս եզակի հատկացուցիչը համաձայնում է եզակի հատկացյալին, հոգնակին՝ հոգնակի բազմակի հատկացյալին, բայց եզակին գործածվում է նաև հոգնակիի, հոգնակին էլ՝ եզակիի հետ: Այդպիսի կիրառություններ կարող են լինել նաև նախադաս գործածության դեպքում: Հատկացուցիչ և հատկացյալի թվային այդպիսի անհամաձայնությունները շեղումներ չեն, այլ՝ լրացում-լրացյալի Իմաստային կապի դրսևորումներ:

Այժմ՝ այդպիսի կիրառություններին վերաբերող փաստեր:

ա) Հետադաս եզակի հատկացուցիչը եզակի հատկացյալի հետ

Օրինակ՝ Յետ կացեալ յուխտէն քրիստոնեութեան և աւերեալ բազում տեղիս Հայոց աշխարհին (Ե., 158): Ձեռն արկեալ և ի սուրբ եկեղեցիսն, տարեալ և սուրբ սպաս եկեղեցոյն սեղանոյ (անդ): Բայց զԱստուծոյ երկիւղն փոխանակել ընդ երկիւղի մարդոյ՝ ոչ առնումք յանձն (ՂՓ, 184):

բ) Հետադաս հոգնակի հատկացուցիչը հոգնակի հատկացյալի հետ՝

Օրինակ՝ Զի ուխտաւորք յտաւկացն դիրազոյն կարգիցին, առ ոչ ինչ վնաս առնել քաղաքին (Խ., 164): Իսկ Սմբատ հանդերձ մանկամբն Արտաշիսի աճապարէր հասանել ի սահմանս Ուտէացոց (անդ, 200): Եկեղեցիք ոչ են պարզև բազատրաց և ոչ գիտք իմաստնոց և ոչ պատիր խաբէութիւնք դիւաց (Եղ., 2): Ուստեբ և դստեբ ազատաց և շինականաց կրթեսցին ի հրահանգս նոցուն մոզաց (անդ):

գ) Հետադաս եզակի հատկացուցիչը հոգնակի հատկացյալի հետ

Օրինակ՝ Զի մի մոռացոնք բնաւնութեան լինիցին (Ադ., 164): Ոռոգանէր զամենայն երեսս երկրի (Մնն., Բ)°: Նա արածէր զխաշինս հօր իւրոյ (անդ, ԻԹ)°: Առատացոյց զգոհս կրակի (Եղ., 1)°: Մնայր գազանացն Արտաշէրի (անդ, 5)°:

դ) Հետադաս հոգնակի հատկացուցիչը եզակի հատկացյալի հետ

Օրինակ՝ Իսկ գունդն Հայոց իբրև յուաւ զայս գոյժ դառնութեան, ոչ յինչ թուլացեալ լքան ի քաջութենէն (Ե., 142): Յետ նորա էր զլուխ արեղայից, և վարդապետ միանձանց, և առաջնորդ մենակեցաց, և վերակացու վաներուսից, և ուսուցիչ ամենայն անապատաւորաց, և տեսուչ ամենեցուն (Բուզ., 6, ԺԶ)°: Խնդութեամբ ընկալան զյափշտակութիւնք ընչից բազմաց (Եղ., 5)°: Գիտեա՛, ասէ, ով մեծդ դիցազանց, զի դիմեալ զա ի վերայ քո Բէլ յաւերժիւք քաջօք (Խ., 42):

ե) Հետադաս բազմակի հատկացուցիչը հոգնակի հատկացյալի հետ, երբեմն էլ եզակի հատկացյալի հետ

Օրինակ՝ Բերին զտասանորդս ցորենոյ և զինւոյ, և ձիթոյ և գանձանակ տան Տեառն (Գ, Եզր., ԺԳ)°: Ածցէ գառն տարևոր քղալէզ և զոյգս աղանւոյ կամ տատրակի (Ղևտ., ԺԲ)°:

Համաձայնության նույնպիսի, սակայն հազվադեպ գործածություն ունի նախադաս հատկացուցիչը:

զ) Նախադաս եզակի հատկացուցիչը եզակի հատկացյալի հետ

Օրինակ՝ Որպէս վարազի < . . > ուտի միսն, և ոչ վնասէ (Եզն., 54):

2 Վ. Յոսյանի գործածած օրինակները նշվում են օգակածն նշանով:

Զցլու միս ուտել՝ դարման է մարմնոյ (անդ): Եւ կաղանջանան ազգ ինչ՝ առանձինն սպանող է (անդ): Մարդն զԱստուծոյ պատուիրանան անց (անդ, 58): Բայց զԱստուծոյ երկիւղն փոխանակել ընդ երկիւղի մարդոյ՝ ոչ առնումք յանձն (ՂՓ, 184):

է) Նախադաս եզակի հատկացուցիչը հոգնակի հատկացյալի հետ

Օրինակ՝ Եթէ գազանք շարի արարածք էին (Ծզն., 52): Եւ լուեալ զայս ամենայն խօսս զամենայն դրան աւագանտյն (ՂՓ., 186). հատկացյալը հատկացական անուն է:

ը) Նախադաս հոգնակի հատկացուցիչը հոգնակի հատկացյալի հետ

Օրինակ՝ Կիսոցն մորթին պատասպարան մերկութեան մերոյ լինին (Ծզն., 52): Եւ արարածոց բնութիւնք անդադար վկայեն զյարութենէ մեռելոց (անդ, 58): Այլ հայեցեալ ի ժամանակ ամբոխին և ի սպասատրաց վատբարութիւնս թողին զնա (ՂՓ, 184):

թ) Նախադաս հոգնակի հատկացուցիչը եզակի հատկացյալի հետ

Օրինակ՝ Սակաւ մարդիկ են յԱրեաց աշխարհիս (ՂՓ, 186): Դաստակերտ մեծ և սիրելի զՀայոց աշխարհս անուանէին (Ե., 144): Կիսոցն ճրագուն դեղնեղի լինի (Ծզն., 54):

ժ) Նախադաս բազմակի հատկացուցիչը հոգնակի հատկացյալի հետ

Օրինակ՝ Այլ մեք զցատոց և զմահուան բազում ինչ պատեառս ունիմք ճշմարիտ բանիւ ի մէջ բերել (Ծզն., 58):

#### Գոյականաբար անված դերբայը իբրև հատկացուցիչ, երա համաձայնությունը

Դերբայները, գործածվելով գոյականաբար, կատարում են հատկացուցչի պաշտոն: Դերբայների հատկացուցչային գործառույթները քերականագիտության մեջ ուսումնասիրված են<sup>4</sup>:

Հատկացուցչի պաշտոնով հանդես են գալիս անորոշ, անցյալ և ենթակայական դերբայները:

Անորոշ դերբայը հոլովվում է եզակի թվով և հետադաս, երբեմն էլ նախադաս գործածությամբ լինում է հատկացուցիչ՝ շհամաձայնելով հատկացյալին:

Հետադաս գործածության օրինակներ՝

Ի վերանալն փութայ և լուսաւորագոյն ևս պատմեալ զհանգամանս վերանալոյն (Ագ., 274—276): Համբարձին զձայն լալոյ իւրեանց (Ա, Եզր, Ժ)°:

Հատկացուցչի պաշտոնով հանդես է գալիս անորոշ դերբայով կազմված դերբայական դարձվածք:

Օրինակ՝ նա ինքնին լինի օգնական, որք թափեալ են յօգնականութեանցն զնայն հանաչելոյ (Ագ., 318): Զև էր ժամանակ պտղոյն բերելոյ (Ագ., 653)°: Երբեմն սոյն Յոհան անցանէր առ այգեօք ուրումն. և էր ժամանակն զայգիսն յառելոյ (Բ., 408):

Նախադաս գործածության օրինակներ՝

Ապրելոյ ճար լինի Տիգրանուհեայ (ՄԽ, 1, ԻԹ)°: Յորժամ ի քարանց ոք շինուածս առնիցէ՝ պատշաճելոյն և յօրինելոյն միայն արարիչ է և ոչ բնութեան (Ծզն., 1, է)°: Խաւարելոյ արեգականն եթէ լուսինն պատահել պատեառս իցէ, յորժամ լուսինն մթանայցէ՝ նմա զինչ պատահիցէ (անդ, 3, Ը)°:

Անցյալ դերբայը հոլովվում է եզակի և հոգնակի թվերով: Սեռականը

<sup>4</sup> Տե՛ս Վ. Քոսյան, Եզդ. աշխ., էջ 61—65, Մ. Միքսեան, Եզդ. աշխ., էջ 201:

հատկացուցիչ է լինում ավելի շատ հետադաս կիրառությամբ և չի համա-  
ձայնում հատկացյալին:

Օրինակ՝ Նա ինքնին լինի բծիշկ վիրաւորելոց (Ագ., 318): Նա ինքնին  
առաջնորդ լինի մոլորելոցն (անդ): Իսկ կանայք երանելի առաքիներեացն և  
կապելոցն և անկելոցն ի պատերազմին համարել ես ոչ կարեմ (Ե., 400—  
402). հատկացուցիչներից երկրորդը դարձված է: Նա ինքնին լինի յոյս յու-  
սացելոց ի նա (Ագ., 318). հատկացուցիչը դարձված է:

Նախադաս գործածության օրինակներ՝

Այսպես՝ Կասկածէր զանարժան գոռոզացելոցն բեկանել զսիրտս (ՂՓՊՂ,  
44)<sup>5</sup>: Ամենայն եկեղեցեօք հնչեցուցանէ զընտրելոցն զագնուականութիւն  
(ԿՎՄ, 7)<sup>5</sup>: Երանելիս այս բարձեալ էր զաւանդելոցն պատիւ (անդ, 36)<sup>5</sup>:

Ենթակայական դերբայը նույնպես հոլովվում է եզակի և հոգնակի թվե-  
րով: Սեռականը հատկացուցիչ է լինում ավելի շատ հետադաս կիրառությամբ  
և չի համաձայնում հատկացյալին:

Օրինակ՝ Որք անզէն զիմաստութիւն տուողին ի մէջ անցուցեալ (Ագ.,  
289)<sup>5</sup>: Զլաւ ճարտարութեան շինողացն ի ձեռն առեալ զհիմունսն յօրինէր  
(անդ, 758)<sup>5</sup>: Միտք գործողին գործեն զշարն (Եզն., 1, Ժ)<sup>5</sup>: Գտաւ պակաս  
ժառանգութիւն բնակողացն Հաշտենից (ՄԽ, 2, 48)<sup>5</sup>:

Նախադաս գործածության օրինակներ՝

Հանապազարուղի հոսէին վտակք յասողացն մեկնութեանց (ՂՓՊՂ, ԺԱ)<sup>5</sup>:  
Անէծս ցաւագին ուղղափառ դաւանողաց մերոց նահանգիս ի վերայ եդին  
(ՅԴՊՂ, 72)<sup>5</sup>:

Այսպիսով, անորոշ դերբայը հատկացուցիչ է լինում եզակի թվով, անց-  
յալ և ենթակայական դերբայները՝ և՛ եզակի, և՛ հոգնակի թվերով: Բոլորը  
ավելի շատ հանդիպում են հետադաս գործածությամբ և, անկախ շարադա-  
սությունից, չեն համաձայնում հատկացյալին:

## 2. Գերանունն իբրև հատկացուցիչ, նրա համաձայնությունը

Գերանվան ոչ բոլոր տեսակներն են հատկացուցիչ պաշտոն կատարում:  
Այդ գործառութիւնով հանդես են գալիս առարկա նշողները, որովհետև հատ-  
կացուցիչը առարկայի կամ առարկայական առման իմաստներ է արտահայ-  
տում: Հատկացուցիչ պաշտոնով դերանունները առանձնահատկություններ են  
դրսևորում, ուստի դրանք ներկայացնենք առանձին-առանձին՝ ցույց տալով  
նրանց համաձայնությունն ու առանձնահատկությունները:

ա) Անձնական դերանունների համաձայնությունը

Անձնական դերանունների (ես, դու, նա, ինքն, իւր. նաև նրանց հոգնա-  
կին) սեռական հոլովաձևերը<sup>5</sup> ավելի շատ հետադաս, ինչպես նաև նախա-  
դաս գործածությամբ, առանց սահմանափակության ունենում են եզակի և  
հոգնակի թվով հատկացյալներ:

Հետադաս գործածության օրինակներ՝

Ի քէն տանջանք և ի մէնջ յանձնառութիւնք. սուր քո և պարանոց մեր  
[ՀՀ, 5 (1), 287]: Մագեա՛, Տէ՛ր զողորմութի քո քո (անդ): Ես ինձէն իսկ մտի  
ի կրակատունն ձեր (անդ, 289): Եւ եթէ զաբ ուրեցայք յոգիս ձեր (անդ): Տէ՛ր  
լռս իմ և կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց (անդ, 342): Բացան աչք իմ արդ  
(անդ, 343): Յառաջ իբրև զհարազատ եղբայր համարեալ էիր յաչս իմ (անդ):  
Զլոյրդ իմ ի բաց տուր ածել (անդ): Մակեցին զոտս իմ և զձեռս իմ, և փո-  
խանակ բերանոյ իմոյ աղաղակեցին ամենայն ոսկեբք իմ (անդ): Բազմաօցի

<sup>5</sup> Ստացական դերանունների ուղիղ ձևերը՝ իմ, քո(քոյ), մեր, ձեր, իւր, և անձնական-  
ների համապատասխան սեռականները նույնն են ձեռով, և, եթե հատկացյալն արտահայտված է  
ուղղական հոլովով, ապա դերանունները չեն փոփոխվում:

ողջոյն մեր առ քեզ (անդ, 344): Խառնեցի արիւնս մեր ընդ արիւնս անկեալ վիրաւորացն (անդ): Զծնուն իւր ի վեր մաքարծեալ՝ կայր յաղօթս (անդ, 558): Առ սէր իւր եկն մարմնացաւ ի մարդկանէ (անդ): Քերահաւատէին յառաջին խրատուէ սուրբ վարդապետացն իւրեանց (անդ, 559): Ընդ անձինս իւրեանց մարտ եղեալ կռուին (անդ):

Նախադաս գործածութեան օրինակներ՝

Մի ըստ քն փառախոյ արտաքս ելեալ՝ շար գազանն դարձեալ բեկանիցէ զիս ([22, 5 (1), 287]: Եւ մեք պատրաստ եմք մեռանել վասն քն սիրոյդ (անդ): Առ ի՞նչ է քն այդ մեծ տրտմութիւնդ (անդ): Ի՞նչ քն պատճառս և զնոսա ևս շարշարեցեն (անդ, 289): Արեւիք և արևմուտք գիտացին զձեր աստուածամարտդ լինել (անդ): Իմ որդին լուսաւոր է և անուշահոտ (անդ, 342): Ամենեքեան իմ ծառայք են (անդ): Ոչ կարէր խափանել զնոսա բարեբարութիւնն մեր շարութիւնս (անդ, 343): Բոլորեցունց մեր արարիչ, զոր դու հայհոյես (անդ): Ինքեանք ինքեանց ձեռք զկրակատունսն այրէին (անդ, 537): Հաց մուրանային և բերէին նմա իւր ծառայքն (անդ, 558):

բ) Ստացական դերանունների համաձայնութիւնը

Ստացական դերանունների ուղղական հոլովաձևերը, որոնք գործածվում են նույն հոլովով հատկացյալների հետ, նմանվում են անձնական դերանունների սեռական հոլովաձևերին՝ առանց իմաստային տարբերակման:

Ստացական դերանունները հետադաս և նախադաս շարադասութեամբ գործածվում են եզակի կամ հոգնակի թվերով և տարբեր հոլովներով հատկացյալների հետ, այսինքն՝ համաձայնում են որոշակի օրինաչափութեամբ և ազատ գործառույթով: Միայն նկատելի է, որ հետադաս գործածութիւնները գերակշռում են:

Այսպիսով՝

1. Հետադաս ստացական դերանունը, իբրև հատկացուցիչ, թվով և հոլովով համաձայնում է հատկացյալին:

եզակի թվով դերանվան օրինակներ՝

Պատրաստեցեն բաժակս ուրախութեան ձերոյ [22, 1, 73]: Յառաջագոյն սահմանեաց կերպարանակից լինել պատկերի Որդոյն իւրոյ (անդ, 416): Մատանայ անկանելոց է յիշխանութենէ և ի պետութենէ իւրմէ (անդ): Որ բարկանայ ընկերի իւրում տարապարտուց (անդ, 418): Անդէն թագաւորեցիք յերկրին քում [անդ, 3, 615]: Անկշիր կենդանոյն ի քազաւորութենէդ քումմէ (անդ): Դարձցի սրտմտութիւն բարկութեան քո յովստէ քումմէ (անդ): Ելէք ի խնդիր տեառն Արարչին ձերոյ [անդ, 4, (2), 72]: Ասացի վասն մարտութեանդ ձերով (անդ): Լիջիք դուք որդիք բարերարք Հօրն ձերոյ (անդ): է փառք ազգիս մերոյ (անդ, 126): է ինքն գրաւական ժառանգութեան մերոյ (անդ, 127): Առ ամենայն ազգս տերութեան իմոյ [անդ, 5, (1), 524]:

Հոգնակի թվով դերանվան օրինակներ՝

Դատեա՛ զմեզ ըստ մեղաց մերոց (Ե., 130): Զի արասցուք ընդ նոսա ըստ կամաց մերոց (անդ): Ի բաց կաց յինէն ծառայ շարագործ տիրացեալ տերանցն քոց. այլ ոչ թողից զքեզ և որդոց քոց զվրէժ նախնեաց իմոց [22, 3 (3), 614]: Եւ արդ արդար դատաստանօք քով մերժեցեր զնոսա (անդ): Ժողովէ զամենայն ժողովուրդս ի ներքոյ թևոց իւրոց [անդ, 4 (1), 650]: Տալ զբարիսն սիրելեաց իւրոց (անդ): Դատել զամենայն ազգս դատաստանօք իւրով (անդ, 654): Հրովարտակօք իւրով ընդ տիեզերս տարածանէր (անդ):

2. Նախադաս ստացական դերանունը, իբրև հատկացուցիչ, թվով և հոլովով համաձայնում է հատկացյալին:

եզակի թվով դերանվան օրինակներ՝

Զպատիւ փառաւորութեանն մի անձին առնել խորհիցէ, այլ իւրում տի-

բարարին [22, 1, 416]: Որ իւրոյ էութեանն ծնունդ է և գիւրոյ գրեութեանն Հոգին (անդ, 417): Առ ձեռում անմտութեան [անդ, 3 (2), 425]: Վասն իմոյ տանջելոյս ի թէն [անդ, 4 (1), 588]: Ըստ մերոյ փրկութեան երևի [անդ, 4 (2), 127]:

Հոգևակի թվով դերանվան օրինակներ՝

Յիւրոց կամաց եղև այնպիսի Ծաւ [22, 1, 416]: Յիւրոց բարոց եղև (անդ): Սա սիրելի լինելոց է յիւրոց բարոց (անդ): Եւ շեն ինչ զարմանք՝ յէ նոքա մերոց դրացեաց արարածոյ անուամբքս անուանին (անդ, 563): Ո՞ր- շպի անասունս վասն մերոց պիտոյից ընդ մեզ հնազանդեաց (անդ): Քո՛ւք կամօք՝ առանց իմոց կամաց՝ եղեր ընդ իս թշնամի [անդ, 3 (3), 615]:

գ) Փոխադարձ դերանունների համաձայնությունը

Միմեանց և իրերաց դերանունները ուղղական հոլով շունեն, միայն հոգ- նակի թեք ձևեր ունեն:

Գործածվում են նախադաս և հետադաս, հոգնակի և եզակի հատկալ- յալներին հոլովով շեն համաձայնում:

Նախադաս գործածության օրինակներ՝

Նա աւասիկ տեսանեմք զբնութիւնսն միմեանց հակառակս [22, 1, 575]: Զիա՞րդ էր՝ զի այն արգանդ երկուս սերմանս միմեանց թշնամիս ընդունէր (անդ): Զիա՞րդ իցեն օրէնքն և շնորհք միմեանց հակառակք (անդ): Այլ իջեալ միմեանց թշնամիքն հաշտութեամբ խաղաղիկ ի միում արգանդի զառէին (անդ): Միմեանց մահու և արեամբ ծարաւի են (անդ): Զի երկու հակառակք իրերաց՝ միմեանց ծախիչ են (անդ): Ոտք ի միմեանց ճաշ երթային (անդ): Իրերաց գործակցութեամբ զարեզակն ստեղծեալ՝ դատաւոր կացուցանէին (անդ, 1, 411):

Հետադաս գործածության օրինակներ՝

Զիարդ իցեն թշնամիք միմեանց Որմիզդն և Արհմնն (22, 1, 574): Զորեքին բնութիւնք առանձինն ապականիչ են միմեանց (անդ): Երկոքին <...> հակառակ միմեանց տային զպատուէրս (անդ, 411): Ոչ եթէ հա- կառակ ինչ միմեանց են գիրք, այլ <...> (անդ): Պոռնկութիւն և շնութիւն ի մերձենալոյ ի միմեանս առն և կնոջ լինի (անդ):

Եզնիկը փոխադարձ դերանունները գործածում է հատկացուցչի, ուրիշ- ները՝ խնդրային, պարագայական պաշտոններով:

դ) Ցուցական դերանունների համաձայնությունը

Ցուցական դերանունները՝ սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, հատկացուցչի պաշտոն են կատարում, երբ դրված են սեռական հոլովով: Եռյակ խմբերը որոշ առանձնահատկություններ են դրսևորում, ուստի ներ- կայացնենք խումբ-խումբ:

1. Սա, դա, նա դերանունները, ավելի շատ գործածվելով հետադաս, հոլովով և թվով շեն համաձայնում հատկացյալին: Նա ցուցակաւոր, իբրև սե- ռական հոլովով հատկացուցիչ, չի տարբերվում անձնական դերանվան նույն ձևից՝ նա-ից (սեռ. նորա):

Հետադաս գործածության օրինակներ՝

Նախնիքն դորա իբրև զնախնիսն մեր կեցեալք և մեռեալք են [22, 3 (1), 366]: Յաւուրս սորա եկաց և եղև քահանայապետ յաթոռն հօրն [անդ, 3 (3), 371]: Մի՛ կորիցէ անձն սորա (անդ): Մի՛ յափշտակեսցէ թշնամին զանձն սորա (անդ): Յաղագս Յոհաննու եպիսկոպոսի և վարուց նորա և ա- զանութեան սորա, և անմտութեան (անդ, 372): Բարութիւն յամս յաւուրս սոցա աճել բազմացաւ (անդ):

Նախադաս գործածության օրինակներ՝

Եւ զսորա ոսկերս ծածկեցին [22, 3 (3), 372]: Կարէր սոցա զօգտակար

խրատն մատուցանել (անդ): Տէ՛ր, թող սոցա զայս զործս (անդ): Թափառնն դոցա աշխարհին և դա ընդ մի համար են [անդ, 3 (1), 366]: Առ ի նորա վարս տեղի գտանել երբէք ոչ կարացին [անդ, 7 (3), 63]:

2. Այս, այդ, այն դերանունների սեռական ձևերը եթե գործածվում են իբրև հատկացուցիչ, ապա չեն տարբերվում սա, դա, նա դերանուններից նույն պաշտոնում<sup>6</sup>:

Օրինակ՝ Մի՛ վարեսցուք հրամանաւ այնորիկ որ գայթակղութիւն արկանէ յերկրպագութիւնն Քրիստոսի (Մե, 3, ԺԵ)՝:

3. Սոյն, դոյն, նոյն դերանունների սեռական հոլովաձևերը ունեն թե՛ որոշչային, թե՛ հատկացուցչային կիրառութիւններ, և հնարավոր է՝ միմյանց հետ շփոթվեն: Մ. Մինասյանը նշում է նրանց տարբերման միջոցներ՝ շարադասութիւնը. նախադասները որոշիչներ են, հետադասները՝ հատկացուցիչներ, համաձայնութիւնը. համաձայնողները որոշիչներ են, շհամաձայնողները՝ հատկացուցիչներ, նախադասութիւն իմաստը, որից էլ՝ կամ որոշիչ, կամ հատկացուցիչ իմաստը<sup>7</sup>:

Սակայն նախադասը կարող է լինել հատկացուցիչ: Օրինակներ՝

Ո՛չ այդ այն Մուշեղն է, զի զարթայն Պապ հրամանաւ դորա և դորին խորհրդովդ զօրավարքն Յունաց սպանին (Բ., 360). դա և դոյն դերանունների սեռական ձևերը՝ դորա (հետադաս) և դորին (նախադաս), նույն արժեքով են՝ հատկացուցչային իմաստով, և վերաբերում են Մուշեղին, որի հրամանով և որի խորհրդով հունաց զօրավարները Պապ թագավորին սպանեցին:

Արդ՝ նոցին բարեխօսութեամբ հաճեցայք դուք ընդ Աստուծոյ (Ագ., 318). այստեղ էլ նոցին հատկացուցիչ է, ինչը հասկացվում է նախադասութիւն իմաստից. բարեխօսները երեկվա սպանվածներն են, որ այժմ կենդանի են, ու նրանց բարեխօսութեամբ (ոչ թե նույն բարեխօսութեամբ) մենք հաշտվելու ենք Աստուծո հետ:

Յաղագս Գրիգորիսի՝ որդոյ Վրթանայ, և նորին վախճանին (անդ): Պատշաճ էր ձեզ խնամել զնոցին որդիսն և զաշակերտսն (անդ, 145): Յաղագս մեծի առաջնոյ քահանայապետին Գրիգորի և նոցունց շիրմանցն (անդ): Եկն նորին որդի Արիստակէս ի ժողովոյն Նիկիայ [անդ, 7 (3), 118]: Զաթոռ եպիսկոպոսութեանն յաջորդեաց նորին աշակերտն Յովսէփ քահանայ (անդ, 119):

Հետադաս հատկացուցիչ օրինակներ՝

Տեսանէի զգլուխ նորուն [22, 3 (3), 144]: Այլ իշխանքն Յունաց և զօրքն նոցին տակաւին էին յերկրին Հայոց (անդ, 145): Ապա այս բանք վաղագոյն ազդ լինէին առ թագաւորն Հայոց Արշակ, և առ զօրավարն նոցին Վասակ (անդ): Յետ մահուանն Տիգրանայ թագաւորէ Վաղարշ որդի նորին (անդ, 7 (3), 118): Յաղագս թագաւորելոյն և պատերազմ ընդ խազրաց և ման նորին (անդ): ԶՏաճատ քեռայր նորին իշխան ի վերայ գաւառին Աշոցաց կարգէ (անդ):

Այսպիսով, բերված օրինակներից, որտեղ կան ոչ միայն հետադաս, այլև նախադաս հատկացուցիչներ, ինչպես նաև բնագրային այլ փաստերից երևում է, որ սոյն, դոյն, նոյն դերանունների՝ հատկացուցչային կամ որոշչային կիրառութիւնները միմյանցից տարբերելու համար կարևոր է հենվել նախադասութիւն իմաստային կողմի վրա, որովհետև տվյալ դեպքում շարադասութիւնը, երբեմն նույնիսկ համաձայնութիւնը չեն օգնում ճիշտ կողմ-

<sup>6</sup> Տե՛ս Վ. Քոսյան, նշվ. աշխ., էջ 50: Այնուամենայնիվ հակված ենք կարծելու, որ այս դերանունների սեռական ձևերը գերազանցապես որոշչային կիրառութիւն ունեն:

<sup>7</sup> Տե՛ս Մ. Մինասեան, նշվ. աշխ., էջ 292, այլև՝ Հատկացուցիչ-հատկացուցիչ կապակցութիւնը գրարարում (թեկն. ատենախոսութիւն), Երևան, 1960, էջ 198—200:

նորոշվելու: Օրինակ՝ «Յաղագս նորին Յոհաննու» և «Յաղագս նոցունց շիրմանցն» արտահայտություններում լրացում-լրացյալները համաձայնում են (թե՛ հոլովով, թե՛ թվով), բայց առաջին դեպքում դերանունը որոշիչ է (նույն շոհանի), մյուս դեպքում՝ հատկացուցիչ (նրանց շիրիմների): սա կոահավում է իմաստից [Առաջին մեծ քահանայապետ Գրիգորի և նրանց (մյուս գործիչների) շիրիմների մասին, ոչ թե նույն շիրիմների]:

Ե) Անորոշ դերանունների համաձայնությունը

Անորոշ դերանունների սեռական հոլովը լինում է հատկացուցիչ և չի համաձայնում հատկացյալին: Գործածվում են թե՛ նախադաս և թե՛ հետադաս: Ոմն, ով դերանունները նախադաս և հետադաս գործածությամբ հատկացուցչի պաշտոն են կատարում և շեն համաձայնում հատկացյալին:

Նախադաս հատկացուցչի օրինակներ՝

Իցէ ոք ուրով քշնամի (ՀՀ, 1, 720): Զի ցուցցէ թէ որ միտին կամօք միտի, և ոչ ուրով բռնութեամբ (անդ): Զի որ ոք ուրով պատճառ ծննդեան կարիցէ լինել. պարտի լինել իմաստութեամբ (անդ, 722): Եթէ արիւնահան ոք իցէ կամ ոք ուրով կարասի ունիցի, և եկեսցէ յայն տեղի, դատ և իրատունք մի լիցին [անդ, 3 (3), 286]:

Հետադաս հատկացուցչի օրինակներ՝

Եթէ որդի ուրով մտավարժ իցէ, գան ոչ ըմպիցէ (ՀՀ, 1, 721): Զմիսն էթէ սիրտ ուրով առնոյր և ուտէր՝ ոչ վնասէր (անդ): Փառքն յաջողութենէ ուրով անուանին փառք, որպէս ի շաջողութենէ ուրով անուանի թշուառութիւն (անդ, 722): Արհամարհանս ուրով ի յանձն ոչ առնու [անդ, 7 (3), 154]: Զայս երգելով փանդոամբ ոմանց, լուաք մերովք իսկ ականջօք (անդ): Իմն, ինչ դերանունները սակավադեպ գործածվում են հատկացուցչի պաշտոնով և շեն համաձայնում հատկացյալին:

Նախադաս հատկացուցչի օրինակ՝

Առանց իրիկ կապելոյ՝ սքանչելապէս կապեալ լինէին (Բ., 16):

Հետադաս հատկացուցչի օրինակներ՝

Որպէս ստուեր իրիկ ոչ երբէք հեռանայ յիմեքէն (Եզն., 184): Զի մինչ շէրն ինչ՝ շէր իմիք թագաւոր, քանզի և ոչ արարիչ իրիկ էր (ՀՀ, 1, 383):

Այլ դերանունը նախադաս ավելի շատ հանդիպում է հոգնակի և չի համաձայնում հատկացյալին:

Օրինակներ՝ Եւ այլոց գիւրքս իգակերպս կալեալ (ՀՀ, 1, 16): Զի որպէս այլոց հաւատով հաստատեաց զանդամալոյծն (անդ): Եւ վասն այլոց երկիւղ ի միտս արկանելոյ (անդ): Զի գիտէր՝ թէ այլոց բանի մեղանչեն (անդ, 18): Այլ և փրկէր իսկ ընդէ՞ր գայլոց արարածս (անդ):

Նախադաս Եզակիի օրինակ՝

Զայլոյ զորդիս յօժարեցուցանիցէ հանել (ՀՀ, 1, 18):

Հետադաս Եզակիի օրինակ՝

Լինել պատուանդան ընդ ուրով այլոյ (անդ):

Այլ ով մեկ անգամ Եզնիկի երկում գործածված է իբրև հատկացուցիչ, այն էլ՝ հատկացյալից հեռացած՝

Զլուսաւորսն շարժել՝ նորա բանին գործ է, և ոչ այլոյ ուրով (ՀՀ, 1, 18): Միւս հազվադեպ գործածվում է իբրև հատկացուցիչ՝

Ո՞ր բանից պարտ էր հաստատուն լինել, ա՞յնը եթէ միւսոյն (ՀՀ, 1, 581): Բազումք անկան յերկաքանչիւրոցն. և ոչ մի ի միւսոյ թիկունս դարձոյց [անդ, 7 (2), 434]:

զ) Հարցական, հարաբերական դերանուններից հատկացուցիչ են լինում ո՞, ո՞վ, ուր, հազվադեպ՝ զի՞, զի՞նչ դերանունները:



Ո՞ր, ո՞վ հարցականների սեռականը՝ ո՞յր (ոյր), գործածվում է իբրև հատկացուցիչ և շի համաձայնում հատկացյալին:

Օրինակներ՝ Զրուանն ո՞յր արարածոց լինէր թագաւոր (22, 1, 651); Ո՞յր բանի խօսին (անդ): Ո՞յր աստուած ո՞յր աստուծոյ արարածոց խնամակալ լինէր (անդ): Յորովայնէ ո՞յր ելանեն սառնամանիք (անդ): Յո՞յր յորովայնէ ելանիցեն գետք [անդ, 4 (2), 261]:

Որ հարաբերական դերանվան եզակի և հոգնակի սեռականները նախադաս գործածությամբ լինում են հատկացուցիչ և շեն համաձայնում հատկացյալին:

Եզակիի գործածություններ

Օրինակ՝ Որոյ մասն ինչ արարած է, յայտ է եթէ նա ամենևին իսկ արարած է (22, 1, 679): Որոյ պատճառն է՝ պարտի լինել իմաստութեամբ (անդ): Զորոյ և զարարածն նորա նշան իմն ընծայեցուցանէ (անդ): Որոյ երեք մասունք են՝ բնական, ցասնական և ցանկական (անդ, 689): Որոյ հայհոյութիւնն ի բունն իսկ գնայ (անդ, 690): Որպէս գառն՝ որոյ արեամբ փրկեցան անդրանիկք որդուցն Իսրայէլի յԵգիպտոս (անդ, 693):

Հոգնակիի գործածություններ

Օրինակ՝ Որոց կէսն կրելիք են և կէսք ուտելիք (22, 1, 686): Որոց ծնունդի ի միում ժամու չէին (անդ): Զի զորոց զոգիսն գտանէ յաստուածապաշտութեան կեցեալ՝ նորոգէ [անդ, 4 (2), 314]: Զորոց զանաւորական անձինս մարգարէն իսկ գուշակէ (անդ):

Որ հարաբերականի մոտ հատկացուցչի պաշտոնը կարող է երկրորդվել անձնական, ցուցական դերանուններով: Ինչպես՝ Զորոց դու առեալ զնոցա պատին [22, 4 (2), 330]:

է) Որոշյալ դերանունները հատկացուցչի պաշտոնում շեն համաձայնում հատկացյալին:

Ամենեֆին, ամենեֆեան դերանունների սեռական ձևերը ավելի շատ նախադաս գործածությամբ լինում են հատկացուցիչ՝ եզակի և հոգնակի թվերով հատկացյալների հետ:

Նախադաս գործածության օրինակներ՝

Այլ ոչ եթէ ամենեցուն սերմանն կուեցին (22, 1, 13): Զամենեցուն զինամս բաշխէ (անդ): (Սա կարող է ըմբռնվել նաև որպես խնդիր): Ամենեցուն մարմինն եղեն գէշ թռչնոց և կերակուր գազանաց [անդ, 5 (1), 31]: Զի ամենեցուն իշխանութիւն Մակեդոնացուցն անուանեսցի [անդ, 7 (1), 57]:

Հետադաս գործածության օրինակներ՝

Աստուած զգործուածն ամենեցուն գեղեցիկ գործէ (22, 1, 13): Անարգա և վատթարս յաչս ամենեցուն զնոսա ցուցանէին [անդ, 5 (1), 31]: Եւ ահա պարզաբար ասացեալ դիւրատար լուսաւորութիւն յականջս ամենեցուն (անդ):

Ամենեֆին կարող է երկրորդաբար ունենալ հարաբերական դերանուն՝ Որոց ընդունելութիւն ամենեցուն մեծապէս արար Մաքսիմիանոս եպիսկոպոս Բիւզանդացուց [22, 7 (1), 58]:

Բոլորեֆին, բոլորեֆեան դերանունների սեռական ձևերը ավելի շատ հետադաս գործածությամբ կիրառվում են որպես հատկացուցիչ և շեն համաձայնում հատկացյալին:

Հետադաս գործածության օրինակներ՝

Ո՞չ ահա ամենայն աշխարհս արարչին բոլորեցուն է գոյութիւն [22, 5 (1), 236]: Յնորեալ մուրիք զկնի նորին խրատով՝ յարարչէն բոլորեցունց ի բաց լինելով (անդ): Կատարեսցեն զսպաս վիճակին իւրեանց, ի փառս Հօրն բոլորեցունց (անդ):

Նախադաս գործածութեան օրինակ՝

Այն է ճշմարիտ Աստուած՝ բոլորեցունց մեր արարիչ, գոր դու հայհոյեալ [22, 5 (1), 236]:

Ամենայն դերանվան սեռականը, միայն հետադաս գործածութեամբ լինելով հատկացուցիչ, չի համաձայնում հատկացյալին:

Օրինակ՝ Եւ որպէս պատճառ ամենայնի ի միոջէ միութենէ տայ (22, 1, 10): Եթէ հայր Յիսուսի է Տէրն ամենայնի, այնու զի զամենայն ետ ի ձեռս նորա (անդ): Օրհնէր զյարդարիչն ամենայնի զԱստուած [անց, 6 (1), 44]:

Այսպիսով՝ ա) Որոշ դերանուններ հատկացուցիչ պաշտոնով հազվադեպ են հանդես գալիս: Դրանք են՝ զի՞, զի՞նչ հարցական դերանունները և սրանց համարյա հավասարվող այս, այդ, այն ցուցականները:

բ) Ստացական դերանունները նախադաս և հետադաս գործածութեամբ հոլովով և թվով համաձայնում են հատկացյալին:

գ) Հատկացուցիչ պաշտոնով գործածվող դերանուններից մյուսները հոլովով և թվով չեն համաձայնում հատկացյալին:

դ) Նկատելի է, որ հետադաս կիրառութիւնները գերակշռում են:

Որ հարաբերական դերանունը հատկացուցիչ է լինում միայն նախադաս գործածութեամբ, իսկ ամենայն որոշյալ դերանունը՝ միայն հետադաս:

### 3. Թվականն իբրև հատկացուցիչ, նրա համաձայնութունը

Թվականներից հատկացուցիչ պաշտոն են կատարում անձներական թվականները, որոնք որոշյալ դերանունների (ամենհին, ամենեքեան, բոլորեհին, բոլորեքեան) պես միայն հոգնակի ձևեր ունեն՝ երկոհին, երկոքեան, երեհին, երեքեան և այլն, և նրանց սեռական ձևերը նախադաս և հետադաս գործածութեամբ լինում են հատկացուցիչ՝ հոլովով և թվով չհամաձայնելով հատկացյալին:

Օրինակ՝ Այլ վասն յանդիմանելոյ զանձնիշխանութիւն երկոցուն՝ թուլացոյց ըստ կամաց երկոցունց (22, 1, 270): Զիա՞րդ երևէր ընտրութիւն գործոցն և ոչ ունէր մարդն իշխանութիւն երկոցունց, և անսալոյն և շանսալոյն (անդ): Եթէ նոյն է էջ է երկոցունց, ընդէ՞ր ատիցեն մոգք զզանդիկս (անդ): Եւ գործն նոյն է երկոցունց, բայց օրինակն ոչ նոյնպիսի (անդ): Զի վայրապար իսկ էր այնպիսուոյն տալ՝ որ ոչ ունէր իշխանութիւն երկոցունց (անդ): Իէմք երկոցունց հանդէպ լինիցին [անդ, 7 (1), 579]: Նոքա առաքեն փոխանորդ իրեանց զԱրիստակէս, հանդերձ ճշմարիտ խոստովանութեամբ, երկոցունց գրով (անդ): Յետ երից ամաց որդուց լինելոյ, ի կամաց երկոցունց մեկնեալ ի միմեանց զատչին (անդ):

Անձներական թվականների սեռական հոլովաձևերը սեռական հոլովով լրացյալի հետ արդեն կատարում են այլ պաշտոններ. հիմնականում՝ որոշիչ, մասամբ՝ ենթակա:

Փանակական և դասական թվականների սեռական ձևերը կատարում են որոշիչ պաշտոն՝ հոլովով համաձայնելով լրացյալին:

Այսպիսով՝

1. Հատկացուցիչ-հատկացյալի կապակցութեան առանձնահատկութիւնները դրսևորվում են խոսքի մասերի արտահայտութեամբ: Հատկացուցիչը արտահայտվում է գոյականի կամ գոյականաբար առնված բառի, դերանվան, թվականի (անձներական) սեռական, տրական, բացառական, գործիական հոլովներով, հատկացյալը՝ բոլոր հոլովներով:

2. Հատկացուցիչ-հատկացյալի համաձայնութիւնը գերազանցապես թը-

վային համաձայնություն է, որը կապ ունի հատկացուցչի և հատկացյալի շարահասություն հետ:

Թվային համաձայնության օրինաչափություններն են՝ ա) ստացական դերանուն հատկացուցիչը թվով համաձայնում է հատկացյալին, բ) մյուս խոսքի մասերով արտահայտված հատկացուցիչները, որպես կանոն, չեն համաձայնում:

3. Հատկացուցչի հետադաս կիրառությունները գերակշռում են նախադասներին: Իսկ, օրինակ, ուր հարաբերական դերանունը միայն նախադաս է գործածվում:

4. Հատկացուցչի պաշտոնով հազվադեպ են հանդես գալիս զի՞, զի՞նչ հարցական, այս, այդ, այն ցուցական դերանունները:

5. Հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունը շարահյուսական հետաքրքրություն ներկայացնող կառույց է նախադասության կառուցվածքի ոլորտում:

#### ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ագ.— Ազաթանգեղոս, Հայոց պատմություն, Եր., 1983:

Բ.— Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Եր., 1987:

Ե.— Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Եր., 1989:

Եզն.— Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Եր., 1994:

Խ.— Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1951:

Մնն.— Գիրք ծննդոց, Եր., 1985:

ՀՀ— Հայկական համարարան

ՂՓ.— Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թուղթ Վահան Մամիկոնյանին, Եր., 1982:

ՆՆԲ— Նոր Հայկազեան բառարան (Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի):

Э. С. МКРТЧЯН — Согласование несогласованного определения с определяемым в грабаре.— В грамматических исследованиях грабара характеризовалось несогласованное определение грабара, оно становилось также материалом диссертационных розысканий. В данной статье автор уделяет основное внимание вопросам частеречного выражения несогласованного определения, оформленного в разных падежах и его числового согласования с определяемым, вопросы, которые связаны со структурными особенностями предложения. Автор подчеркивает, что некоторые толкования указанных вопросов не приемлемы для него.